


ՏՆՕՐԷՆ-ԽՍՐԱԳԻՐ
Ն. ՓՈՐՈՍԵԱՆ
 ԿԱՐԱԿ ՎԱՄ ՈՐ ԵՆ Է ԳՈՐԿՈՒԹԻՒՆ
 ՊԵՏԲ Է ՈՒՂՂԵՆ, ԱՍԻ
 Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ
 ԳԱՀԻՔԷ (Հասցեպահիք)

Rédaction du journal arménien
ARCHALOUICE
 HADJANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻՍՏՈՒ ՇԱՔԱԹ	
Տարեկան, այլ զանկն.	60
Վեցամսեայ	35
ՕՏԻՐ ԿՐԿՈՒՆԵՐ	
Տարեկան Ֆրանկ	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԽԿ Է
 ԵՒ ԹՂՔԱՏԱՐԻ ՇԱՔԱԹԸ
 Խմբագրութեանս վրայ:

Խմբագրութեանս ուղղուած
 գրութիւնք եւ չ՛են տրուիր:

ԱԶԳԱՊԱՏԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐ

F. (*)

Համաձայն մեր խոստման, Գահիրէի մէջ Երուսաղէմի սեփականութիւնը եղող ազգային կալուածներու մասին գրելէ առաջ, հարկ կը համարինք մեր ընթերցողները քանի մը մանրամասնութիւններու ալ ծանօթացնել, իրենց գատողութիւնը ապիւղ հիմքերու վրայ հաստատելու համար:

Այդ մանրամասնութիւնները քաղելու ամենէն հաւաստի աղբիւրը կ'ընտրենք 1866 ին Երուսաղէմի մէջ հրատարակուող «Սիօն» ամսագրին Ա, տարի 1 սեպտ. ութերորդ համարը, որուն մէջ կը գտնենք Ս. Աթոռոյ անշարժ կալուածոց նկատմամբ բաւարար և ստոյգ տեղեկութիւններու պաշար մը. մանաւանդ թէ «Սիօն» ի խմբագրութիւնը ժամանակին պաշտօնավարող Պատրիարքին հաւանութեամբ և տեղւոյն միաբաններուն հսկողութեան տակ կատարուելուն համար, այլ ևս ճշգրտութեանը վրայ կասկածելու ալ տեղի չ'մնար:

Ս. Աթոռոյ մէջ Պատրիարքի և Միաբանութեան կողմէ ազգային կալուածոց նկատմամբ ի գործ դրուած դատապարտելի անհոգութիւնները հաստատող և քննադատելի հատուածները նոսր գրերով կը նշանակենք:

Ահաւաստի ինչ որ կը կարգանք «Սիօնի» մէջ:

«Ս. Յակոբեանց աթոռոյ կալուածոց խնդիրը, որ դարաւոր ժամանակէ ի վեր անխնամ և բարձի բողի եղած է պէս պէս պատճառներով ու արգելքներով, այսօրուան օրս ժամանակին պարագայից նկատմամբ մեծ և կարեւոր խնդրոյ տեղ անցած է: Ժամանակին պարագայից նկատմամբ ըսինք, վասն զի թող պատմութիւնը՝ որ մեր ըսելիքը կը հաստատէ, այլ և սակէ ոչ շատ տարի առաջ Ս. Աթոռոյ տարեկան մտից գլխաւոր և իբր միակ աղբիւր՝ բարեպաշտ ու ջերմեռանդ ուխտաւորաց շնորհած ողորմութեանց արդիւնքն էր և միջոց. և նախորդ գարուց մեջ ևս՝ երբ երջանկայիշատակ Գրիգոր Պարոնտէր և Գրիգոր Շիթայակիր պատրիարքաց ժամանակ Ս. Աթոռը անսակելի պարտուց տակ վերջին շունչը հասած կը հեծէր,

(*) Շար. 22րդ թիւէն:

ուխտաւորաց և բարեպաշտ ազգայնոց առասպելորէ ողորմութեամբքը յաջողեցան գրութի գերութենէ ազատել յիշեալ վանքը ուստի թէ այսօրինակ պարտքերու ժամանակ և թէ հասարակ տարիները միաբանութեան ներքին և արտաքին բոլոր ծախքերը բարեպաշտից նուէրներովը կը հոգացուէին. այս պատճառաւ հետաւոր կարածոց վրայ յատկ խրկումք սակեցաւ զանոնք շարժեցաւ եւ արդիւնաւորեալ մնալիս անհոգ ու անսարքէին նախորդ պատրիարքները» (որպէս թէ ներկաները նոր բան մը ըրած ըլլային):

«Սոյն անտարբերութեան վիճակը աւելի զգալի եղաւ վերջին 30 տարուան մէջ. երբ ԵԳԻՊՏՈՍԻ նման բարեկից վիճակը Ս. Աթոռոյ իրաւունքները զրկելու գրացաւ, պատճառելով նոյն արդեամբք վիճակին ազգայնոցը ուսումնական և բարոյական կեանքը բարուքել, որոյ ևկարագիրը յայնի է հասարակութեան:»

«Վշտացաւ ասոր վրայ Միաբանութիւնս, վասն զի ասոնք ուրիշ քաղաքաց շատեալ նման բարեպաշտից նուիրած կալուածքներ չէին, այլ Ս. Աթոռոյ յատուկ իւր աշխատութեամբը և խնայողութեամբը աւելցուած գումարներովը գնուած, շինուած ու նորոգուած կալուածներ, ինչպէս բոլոր տեղացի ժողովուրդը կը վկայէ ճշմարտութեանս:»

«ԵԳԻՊՏՈՍԻ սոյն ընթացքը յիշելովս կուզեմ իմացնել թէ, այս օրինակ անակնկալ դէպք մը որ մեծ ու զգալի կորուստ մը և նուազութիւն տարեկան արգեանց Ս. Աթոռոյ կը համարի, երեք պատրիարքաց սըրտին՝ Չաքարիայի, Կիրակոսի և Յովհաննու մեծ ցաւ պատճառելով յուսահատեցան և իրարու զանց առին ուրիշ կողմեր եղած կարածոց արդիւնքներն ու հաշիւները պահակեցաւ զանձայեկներէն, որոնց մէջ էթէ հաւատարմներ կային, («») նոքա միայն ի բարեպաշտ ոգւոյ շարժեալ ինքնին կը զրկէին գոյացած արգիւնքը ի Ս. Աթոռս:»

«Բայց վերջապէս ժամանակն եկաւ զանոնք փնտռելու. բարեպաշտ ուխտաւորաց պակասարիւնը և անոնց շնորհած դարպասական ողորմութեան ևուստարիւնը մէկ երկու տարիէ ի վեր Միաբանութեանս ուշը գրաւեր էր. Ս. Աթոռոյ ապագան իրենց աչքին խաւար ու սպառնալից մթնշորտի մը մէջ սկսաւ երեւալ մանաւանդ երբ Ս. Քաղա-

քիս մէջ կենսական պիտոյից թանկութիւնը օրէ օր սաստկացաւ և ըն. և ըն.»

Այս քանի մը տողերը այնչափ յստակ և որոշ կերպիւ կը բացատրեն անճարակութիւնը՝ այն ատենուան և թիւրքոս ներկայի մէջ ալ Երուսաղէմ ապաստանոց յոյլ և թոյլ միաբան կոչուած տարբին, սրտն չափազանցութեան սահմանէն ալ անցած անհոգութիւնն ու անտարբերութիւնը իրեն երեւին տալէ վերջ, պատշաճ կը գտնենք առաջարկել որ Երուսաղէմական կալուածոց մատակարարութիւնը ամեն տեղի մէջ ալ, գոնէ յետ այսու ապակի դրոնացման դրութեան վերածուի և տեղական օրէնքներուն ու պիտոյից հմուտ և ծանօթ հինգ պատուաւոր անձերէ բաղկացեալ խնամակալութիւններու ձեւամբ ըլլայ. որով հետեւ ինչպէս կը տեսնենք բարեպաշտ ու ջերմեռանդ հոգիներու սրտաբաղիս նուէրներն կը փճանան այլ և այլներու քմահաճոյիցը թողուելով:

Ահա թէ ինչո՞ւ մեր խորագիրը փոխանակ Երուսաղէմապատկան կալուածները և սելու ԱԶԳԱՊԱՏԱԿԱՆ պիտի գործածենք և ասարակոյս չկայ որ այս է նպատակայարմարը, քանի որ այդ կալուածները ուղբին անհատներուն նուէրներն են և ոչ թէ Երուսաղէմի դատարկապորտներուն հօրենական տունէն բերուած: Աչքերնիս բանանք քիչ մը:

ՆԵՆՍՈՆ

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

«Քիչն հարցուցին — Ո՞ւր կերթաւ. պատասխանեց — շատին քով:»

Այսպէս կ'ըսէ ժողովրդական առած մը, որու ճշմարտութիւնը՝ դժբաղդաբար միայն անտեսական կեանքի մէջ չէ որ կը հաստատուի. բանիբուն դիտողի մը համար շատ աւելի նախանձելի են յառաջդիմութեան այն նորանոր բարիքները, որոնք օր ըստ օրէ կ'երթան ձոնացնելու արգէն իսկ զարգացած ազգերու մտաւոր ու բարոյական հարստութիւնը, քան ամեն օր մեր աչքերուն առջեւ հարուստներուն սակեկոյտերը բարդելու վազող կլորիկ դեղինները: Ու այս օրէնք ի հիման վրայ վա՛յ մեզ, քիչ ունեցողներուս, զի մեր ունեցած քիչն ալ տակաւ պիտի քաշուի երթայ շատին քով: Սակայն հակառակ իր աղօտ վճռականութեան՝ ճակատագրական խաղ մը չէ այս իրողութիւնը, որ ամենաբնական պատճառներէ կը ծնի: Շատ ունեցող երջանիկները՝ մանաւանդ բարոյական սահմանի մէջ՝ բնութեան առանձնապէսորհեալ զաւակները չեն, եւ ոչ ալ մենք քիչ ունեցողներս

ի ծնէ գործողներ ենք. վիճակներու այս հակա-
գրութեան մէջ զեր խաղացողը մէկ կողմէն մնալ
աշխատութիւնն է. իսկ միւս կողմէն մեծախոս
ծուլութիւնն է. Ասոր համարուելու համար բաւական
է համեմատական ակնարկ մը միայն նետել մեր
և զարգացած ազգերու հանրային գործունէութեան
վրայ:

Թողնենք մեր հանրային միւս գործերը, որոնք
կուսակցական եւ անձնական կրթութեան պայքարներէ
կը քանդուին օր ըստ օրէ. սակայն սպին կայ
գործ մը, որու մէջ մեզ պատկերող ոչ մի բանա-
կան պատճառ գոյութիւն ունի, որուն պէտք
այնքան ակնյայտնի է եւ վստահանալի, որ համազ-
ուելու համար հարկ չկայ վիճաբանութեանց կամ
պրօպագանտի, ինչ որ գործընթակ յեղափոխական
գործին համար կ'ընենք. կրթական գործը: Եւ ուս-
կայն ի՞նչ կը ներկայացնէ ան այսօր, իր ամբող-
ջութեանը մէջ: Ակնարկին արտասահմանի վրայ
մասնաւորելով՝ մեր մատաղ սերունդին դաստիա-
բակութիւնը հովանաւորող՝ ունինք մի միայն
տարրական հաստատութիւններ, որոնց մէջ ինչ
թէ շատ կանոնաւորները հազուադէպ բացառու-
թիւններ են: Բայց անդին կայ ժողովուրդը. հա-
զարաւոր գաղթական երիտասարդներ՝ թիրուս
կամ բարձրակարգ տղէս, որոնց բարոյական հոգա-
ծութեան վրայ մտածած ենք երբ և ինչ:

Մինչդեռ Եւրոպական յառաջադէմ ազգերը,
որոնք մեզմէ շատ ստալ սկսած կրթական կող-
մակեր դուրսէն՝ յարասեւ եւ ահագին գոնողու-
թիւններով, դաստիարակութեամբ մերձիկ սերունդներ
հասցուցած են արդէն՝ միւս կողմէ սակայն միշտ
ուշադրութեան առած են նաեւ չափանախնդրու
կրթութիւնը, որ հետզհետէ լուրջ կարեւորութիւն
ստանալով, այսօր ընդհանուր կրթութեան է՛ն
էական մէկ մասը դարձած է: Մինչև հիմա Եւրո-
պացի գործաւորը, որ կեանքի աննպաստ պայման-
ներու երեսէն՝ չէր կրցած խնամուած կրթութիւն
մը ստանալ եւ կամ անոնք, որ բողոքով զուրկ
էին մնացած ու եւ է զարգացումէ, ամէն տեղ
իրենց տրամադրութեան տակ կը գտնէին գիշերա-
յին դասախօսութիւններ, ձրի ընթացքներ, որոնք
գիտական ու գրական ամէն ճիւղերու վերաբերեալ
մասնաւոր ածան հրատարակութիւններ եւ ուրիշ
գանձաւոր մատչելի միջոցներ, որոնք կառավա-
րութիւններու եւ կամ մասնաւոր ընկերութիւն-
ներու կողմէ կը հայթայթուին Սակայն այսչափին
ալ անբաւական նկատելով՝ մասնաւորապէս ժողո-
վրդին լուսաւորութեանը նուիրուած անհատներ
և ընկերութիւններ խորհրդան գործը աւելի ըն-
դարձակել եւ գիտութեան ու քաղաքակրթութեան
բարեքնքեր աւելի մեծ չափով հանրացնելու համար,
հաստատել ժողովրդական համալսարաններ: Ու
անա այս կարգի երկու անդրանիկ հաստատու-
թիւններու բացման առթիւ է որ այս տողերը կը
գրենք: Հաստատութիւններ, զորս համակրական
սիւնակներով ողջոտնեց այս օրեր, գրեթէ ամբողջ
Եւրոպական մամուլը:

Գործը՝ ինչպէս անուանի ալ կը ցուցնէ, որչափ
օգտակար, նոյնչափ ալ գեղարարն էր եւ յաջողե-
լու համար խիզախ ու անյողզող ձեռնբեցութեան
մը կը կարօտէր: Ու այս ձեռնբեց գործիչը առաւ
Ամերիկա. այն երկիրը, որ ինչպէս տարօրինակ
այնպէս ալ տարօրինակօրէն օգտակար նորութիւն-
ներու հայրենիքն է: Իսկ գործադրութեան հողը
գտնուեցաւ Անգլիայի մէջ, ուր ժողովուրդը ամէն
տեղէ աւելի յարգուած է: Պ. Վալթէր Վրոման
Ամերիկայի մէջ մարդասիրական գործերով ծանօթ
ընտանիքի մը պատկանող երիտասարդ մը, բան-
ւորներու կրթութեանը նուիրուած բարձրագոյն
հաստատութիւն մը հիմնելու գաղափարը կը յղանայ.
սակայն իր այս գաղափարին Ամերիկայի մէջ գոր-
ծարարութեանը զէմ ինչ ինչ արդիւնքներ նկատելով՝
զայն ընդարձակօրէն մշակելէ ետքը կ'անցնի
Անգլիայի մէջ կ'երթայ ուղղակի Օքսֆորտ քաղաքը
որ Անգլիայի ամենահին համալսարանական քա-
ղաքն է: Համալսարանին ամենէն հմուտ եւ պատ-
կառելի հեղինակութիւնները, որոնց խորհուրդին
կը դիմէ ինք. բաց ՚ի քանի մը բացառութիւններէ՝
կը վստահացնեն զինքը թէ իր կողմէ ՚ի զուր պիտի
անցնի, ոչ մէկ ուսանող չպիտի կրնայ գտնել եւ
բանուր դասակարգը անտարբեր պիտի մնայ իր
նպատակին: Բայց երիտասարդ Վրոմանը յուսա-
հատիր, կը գտնէ քանի մը համախոհներ ու ասոնց

հետ խորհրդակցելով գործին մանրամասնութիւն-
ները վերջնականապէս ձեւեղէ յետոյ, գործադրու-
թեանը կը ձեռնարկէ: Վարժարանին երկու տար-
ուան գոյութիւնը կ'ապահովէ անձնական նուիր-
ատուութեամբ մը եւ ինն ամիս առաջ փետրուար
22 ին արդէն բացման հանդէսը տեղի ունեցաւ
բանուորական բարձրագոյն վարժարանին, զոր՝
Օքսֆորտի համալսարանին հուշակաւոր ժողովրդա-
ւէր փոփոխութեամբ ձօն Ռուսթինի անունով կոչեց
Ռուսթին Հալ: Հակառակ եղած յոռետես գու-
շակութիւններուն՝ այնքան ստուար բազմութիւն
մը հաւաքուած էր հանդէսին, որ սրահը հաղի-
կը բաւէր: Անգլիայի բանուորական 40 մեծ ընկե-
րութիւնները, որոնց անդամներուն համագումարը
300,000 ի կը համարէ՝ պատգամաւորներ զրկած
էին եւ ամէն կողմէ խռնուած էին գաղափարակից
բարեկամներ: Պ. Վրոման այս բազմութեան առջեւ
իր ձեռնարկին նպատակը բացատրեց գեղեցիկ բա-
նախօսութեամբ մը, զոր կ'արժէ ամփոփել:

Հալ Ռուսթինը՝ բանուորը կը ճանչնայ ոչ մի-
այն իբրև արդիւնաբերող մը, այլ նաեւ անհա-
տակաւ հոգի մը, որ ուրախութեան ու գորովի
պէտք ունի. ոչ միայն արուեստագործ մը, այլ եւ
քաղաքացի մը, ամուսին մը, հայր մը: Համալսա-
րանին քով կանգնած՝ անոր լրացուցիչ մասը
պիտի լինի այս հաստատութիւնը: Ասոր աշա-
կերանները միութեան կապ մը պիտի լինին՝ բան-
ւորական գործնական կեանքին եւ համալսարանի
պատրաստած զուս գիտական շրջանակին մէջ:
Շարունակական յարաբերութիւններ պէտք է պահ-
պանուին այս երկու շրջանակներու միջև, որով-
հետեւ իթէ համալսարանին կը պատկանի պետական
մեծ մարդեր արտադրած ըլլալու պատիւը, պէտք
չէ՛ մտնալ որ նոր քաղաքակրթութիւնը ստեղծող
հնարիչներու մեծ մասը պարզ գործաւորներ եղած
են. ինչպէս, Վալթ, Սթէֆընսըն, Ֆրանքլին, Էտի-
ւեն Սթրա եւլն: Այս վարժարանին գաղափարը ձօն
Ռուսթինին գաղափարն է եւ Գրիտտոսի իսկ գա-
ղափարն է, քանի որ իմաստուններուն եւ զորա-
ւորներուն պարտքն է սպէտները լուսաւորել եւ
տիրներուն օգնել: Այս գաղափարը կը պահանջէ,
որ մարդոց մէջ մեծը լինի ան, որ ամենէն աւելի
լաւ կը ծառայէ անոնց:

Ռուսթինի հային նպատակն է, բաց ընկերա-
յին կեանքի իրողութիւններուն ըմբռնումէն, առ-
ձեռն աշխատութեան մասին շատ ազնիւ գաղափար
մը ներշնչել բանուորներուն մէջ: Եւ այս յարգուած
գաղափարին իբր խորհրդանշան՝ վարժարանի սրահ-
ներէն մէկուն մէջ կ'ախտուած է ձօն Ռուսթինը
ներկայացնող հին նկար մը, ուր յարգելի փոփո-
ւէրը բանուորի տարագով, բանուոր բրիչը ուսը՝
քանի մը ուսանողներու հետ կ'երթայ Օքսֆորտի
շրջակայքի ճամբաները նորոգելու: Կազմակերպու-
թիւնը շատ նպատակայարար է եւ ծրագիրը
բազմակողմանի, այնպէս որ ամէն հասակի ու
դիրքի գործաւորներ կրնան օգտուել: Բացի մշտա-
կան ցերեկեայ եւ գիշերօթիկ աշակերտներէ՝ կ'ըն-
դունին նաեւ պարբերական ուսանողներ, որոնք
ամէն անգամ որ վիճակին ներքէ՝ կրնան ժամա-
նակի մը համար գործերին ձգել եւ վաղ ուսանիլ:
Եւ ինչ որ հետաքրքրական նորութիւն մըն է,
ուրիշ թղթակից աշակերտներ ալ, այնպէս որ այն
գործաւորները, որոնք չեն կրնար գործերին թու-
ղուլ՝ տարեկան 32 ֆրանք վճարումի մը փոխարէն
կրնան ուսման ծրագիր, խորհուրդներ եւ ընթեր-
ցանութեան գրքերու փոխառութիւն ստանալ եւ
մինչև իսկ թղթակցութեամբ իրենց գրաւոր պար-
տականութիւնները սրբագրել տայ: Այս կարգի
արդէն 500 ուսանողներ ունի վարժարանը: Արհես-
տի կամ տարիքի խտրութիւն չկայ եւ ուսանող-
ներու մէջ կը գտնուին գրեթէ ամէն արհեստի
ներկայացուցիչներ, ինչպէս հանքագործ, ներկա-
րար, տպագրիչ, աստղագործ, պարտիզպան, մը-
սագործ եւլն. եւ սկսած 18 տարեկան երիտա-
սարդներէ մինչև յիսունոցներ, Հեռուէն թէ
մօտէն արդէն հազարաւոր երիտասարդներ ինք-
նաբերաբար համախոհուած են այս նոր վարժա-
րանի գաղափարին՝ բանուորներու ազատութեան
թեան շուրջը եւ վճողաբար գործի սկսած են,
պերճախօս օրինակ մը տալով երկրին ամբողջ
երիտասարդութեան:

(Մնացեալը յաջորդով) ԱՌԱՆՁԱՐ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԿԼՈՒԹՐԱՆՄԱՆ ԳՍՏԵՐԱԶՄԸ

Ի նախալ զօրավար Սիմոնի հրամա-
նին տակ գտնուած կլէնքօի բանակատեղ-
ւոյն մէջ առաջին ծանր ընդհարումը տեղի
ունեցած է Անգլիացոց և Պօէրներուն միջև:
Ինչպէս հասած հեռագիրներէն կ'երևի,
երկու կողմին ալ կրած կորուստը ծանր է:
Լէտիամիթէն հոկտեմբեր 20 ին քաշ-
ուած պաշտօնական հեռագիրը այդ ճակա-
տամարտին վրայ հետեւեալ համառօտ տե-
ղեկութիւնը կուտայ:

4000 շափ Պօէրք արեւածագին կլէն-
քօի անգլիական բանակատեղին վրայ յար-
ձակեցան զօրավար Վիլիամսի առաջնորդու-
թեամբ: Անգլիական բանակատեղւոյն վրայ
իշխող բլուրի մը վրայ 3 թիւթանօթ զետե-
ղեցին և անմիջապէս ռմբակոծութեան սկը-
սան: Անգլիական հրետանին ալ պատաս-
խանեց անոնց, և յաջողեցաւ Պօէրներուն
թիւթանօթները լռեցնել: Անգլիական հե-
տեակազրքերը յարձակման համար յառա-
ջանալ սկսան եւ կատաղի պատերազմէ մը
ետքը, որ կէս օրէ վերջը մինչև ժամը
մէկ ու կէս տեւեց, Պօէրներուն գրաւած
գիւղին տիրեցին եւ անոնց հինգ թիւթա-
նօթները գրաւեցին: Պօէրները դէպ ՚ի
արեւելք քաշուեցան:

Ուրեմն Անգլիացոց կողմը կը մնայ
այժմ՝ յաջողութիւնը, որ սակայն շատ սուղի
եղած է իրենց:

Ռիւքէր յայտնելով հանդերձ թէ Պօ-
էրները նշանաւորութեան մասին իրենց վա-
յելած համբաւէն շատ վար են, կը խոս-
տովանի թէ Անգլիացոց կրած կորուստը
շատ մեծ է:

Զօրավար Սիմոն որ յարձակող գուն-
դին անձամբ կը հրամայէր, մահացու կեր-
պով վիրաւորուած է:

Սոյն պատերազմին մէջ 10 հատ սպան-
նուած եւ 22 վիրաւորուած սպաներ կան.
և 31 զինուոր սպանուած եւ 131 ալ վիրա-
ւորեալ են Անգլիացոց կողմէն:

Ըստ Ռիւքէրի՝ Պօէրներուն կորուստը
ասոր և ապաւանկը եղած է. սակայն միւս
կողմանէ կը հեռագրուի թէ Պօէրք իրենց
մեռեալները եւ վիրաւորները միասին տա-
րած են և ու քաշուած պահուին: Պարագայ
մը, ուրկէ հաւանական չլի թէ Պօէրները
այնքան շատ մեռեալ եւ վիրաւոր ունեցած
ըլլան:

Այդ առաջին ընդհարումին հետե-
ւեալ օրը երկրորդ պատերազմ մ'ալ տեղի
ունեցած է Էլանտալակի մէջ՝ նախորդ-
օրուան պատերազմի գաշտէն 33 միլիոն դէպ
ի հարաւ, մինչդեռ Պօէրները միեւնոյն
ատեն ՚ի կլէնքօ նորէն յարձակողականի
կրակէին:

Էլանտալակի մէջ Պօէրները, որ
թուով շատ պակաս էին Անգլիացիներէն,
բաւական ատեն գիմարելէ յետոյ բազ-
մութեան ընկճելով ստիպուած են նահան-
ջել: Անգլիացիք յարձակմամբ տիրած են
Պօէրներուն բանակատեղւոյն, ուր ձեռք
անցուցած են բաւական թուով ձիեր, բեռ-
նակառքեր, կահեր եւ երկու թիւթանօթ:
Սոյն պատերազմի մէջ Անգլիացոց
կորուստը կը բարձրանայ 257 հոգի. 3

սպանուած եւ 30 վիրաւորեալ սպայ, 37 զինուոր սպանուած եւ 175 վիրաւորուած, եւ 10 հոգի անյայտ եղած են: Իսկ Պօէրներուն կորուստը չգիտցուիր դեռ, միայն սա չափը յայտնի է թէ Պօէր Բ. հրամանատար Գօք եւ Ռիէթ ժուպէն (ընդհ. հրամանատար ժուպէնի եղբորորդին) վիրաւորեալ գերի ինկած են Գերմանացի զնդապետի մը հետ:

— Ամուսյ 23ին Պօէրներու սառար գունդի մը յառաջխաղացութիւնը տեսնելով անգղիական զօրքերուն հրամանատարը, զօրավար Եուլ, Տընտի քաղաքը պարպած է, եւ վիրաւորեալները հոն թողուլ ՚ի կէնքօ՝ բանակատեղին կեդրոնացուցած է բոլոր ուժերը:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Վսեմ: Տիգրան փաշայի գալուստը անցեալ չորեքշաբթի օրուան թուով ծանուցինք արդէն այս սինականերուն մէջ և այդ առթիւ յոյս յայտնեցինք թէ Նորին Վսեմութեան վերագարձը բարւոք անօրինութեամբ վերջ մը պիտի գնէ շատ մը առկա մտացած ազգային հարցերու, ինչպէս են Վարժարան, Առաջնորդարան, Եկեղեցի, չը յիշուի ևն. որոնք պատճառ եղած են ահագին խրամատ մը բանալու ժողովականաց և ժողովուրդին յարաբերութեանցը մէջ:

Մենք կը ցանկայինք, որ ժողովականներ և ժողովուրդ համաձայնութեան սերտ կապերով միմեանց ձեռք ձեռքի տուած մէկ սիրտ մէկ հոգի վարէին ազգային գործերը յօգուտ և յառաջդիմութիւն ազգին սակայն ցաւայի է ըսել թէ ո՛չ ժողովականները ո՛չ ալ ժողովուրդը քիչ մը հետամուտ չեն լինիր իրաց կացութիւնը լաւ մտնելու և ահա այս կիրակէ գարձեալ երկուստեք (սարկաւազք և ժողովուրդ) « Գոհութիւն » ը առանձին երգելու նոր մէքոսք ՚ի գործ գրած են, որով Եկեղեցին անպատմելի խառնաշփոթութեանց թատերավայր մը դարձած է:

Մեր լրածներուն նայելով, ժողովուրդը Առաջն. փոխ. տեղապահին գլուխը հաւաքուելով դատին մէջ սաստկապէս կը բողբէ իրեն դէմ. քահանան, որուն բոլոր արժանիքը միայն մարդահաճոյութիւնն ու ալիկարութիւնն է, եկեղեցւոյ ետեւի դռնէն խոյս կուտայ: Եկեղեցւոյ Սրբազան արարողութիւններն 10 վայրկեանի չափ կը դադրին տիրող խառնաշփոթութեանց մէջ:

Եկեղեցւոյ աւարտուէն վերջ ժողովուրդէն մաս մը կը դիմէ Երեսփ. ժողովոյ անդամներէն Սեղաք էֆ. Դաւթեանի, որ նոյն պահուն եկեղեցւոյ բակը կը գտնուէր, և որ խոհեմութեամբ կը յորդորէ զիրենք համբերող ըլլալ և ինչպէս որ խոտացուած է ասկէ չորս շաբաթներ առաջ խառն ժողովին ներկայացող պատգամաւորութեան, Պատկ. Երեսփ. ժողովոյ որոշման սպասել և ըն:

Օրը կանցնի առանց վշտառիթ հետեւանքի մը, ինչ որ ամենէն փափաքելին է:

Եթէ ստոյգ է մեր լրածներն, երէկ երեքշաբթի Պատ. Երեսփոխանական ժողովը դումարուած է Ազգ. Առաջնորդարանի մէջ, Ատենապետութեամբ Վսեմ: Տիգրան փաշայի: Մեծ յոյս ունինք թէ այդ ժողովին որոշումը շատ խաղաղատիրական պիտի ըլլայ և իբր առաջին խնդիր Պատ. Երեսփոխանութիւնը պիտի զբաղի « չլիշուի » ի հարցովը և իսպառ վերջ մը պիտի գնէ Ս. Եկեղեցւոյ նուիրականութիւնը և կարգն ու աւարտ խանգարող անխորժ արարքներուն:

Դարձեալ լուրջ նկատողութեան պիտի առնէ Վարժարանի խնդիրը, որոյ մասին ծնուցայ կողմէ օրէ օր եղած գանդատներութիւնը կը բազմապատկին և ձայներ կը բարձրանան մինչև ականջներու թմբուկներ պատուելու չափ:

Այս առթիւ անշուշտ չ'պիտի մոռնայ Պատկ. Երեսփոխանութիւնը պէտք եղած հրահանգները տալ առ որ անկ է, վարժարանի ներքին պաշտօնէից մէջ ալ համերաշխութիւնը և խաղաղութիւնը վերահաստատելու համար:

Կիրակի 10)22 Հոկտ. յետ մի'օրէի ժամը 9ին տեղի ունեցաւ ՚ի Մէնչիյէ պատկազրութեան հանգէն Տիար Յովհաննէս Չէքմէնեանի, ընդ Օրիորդ Նէվրիկ Այճեանի:

Օր. Նէվրիկ Այճեան դուստրն է Կ. Պօլսոյ ծանօթ սեղանաւորներէն Յակոբ էֆ. Այճեանի: Խմբագրութիւնս մշտապէս եւ երջանիկ կենակցութիւն կը մաղթէ երկու ամուսնուրու:

ԿԵՂԾԱԻՈՐԸ

Յարափոփոխ ունի գծուծ նա դիմակ. Յաճախ քծնող, մերթ սողացող, միշտ դրուժան, Ի՞նչ է ընկեր. Ի՞նչ բարեկամ. բա՛ռ համակ, Երբ բարձրագոյ խօսի իր շահն անձնական:

Քեզ կը խօսի համակրանօք. միշտ անուշ, եւ շա՛տ հեշտիւ քեզ բարեկամ կ'անուանէ. Մէն մի խօսքիդ՝ նա կ'ընծայէ սիրով ուշ. եւ հիացմամբ խելքդ ու միտքդ կը դովէ:

Փոյթ չէ՛ թէ դուն զանի բնա՛ւ չես սիրեր. Պախարակես անոր ընթացքն անազնիւ, Քեզնէ երբէ՛ք բացատրութիւն չի խնդրեր. Ժպիտն է նո՛յն. թէպէտ կատէ՛ քեզ սերտիւ . . .

Կը մօտենայ, կը բարեւէ մի՛շտ սիրով. եւ կը խօսի. ձեռքդ ալ պի՛նդ մը կը սեղմէ. Մինչ զառնութեամբ լի է սիրտը ու մաղձով. Հոգւոյն խորէն երբ քու կորուստդ կ'երազէ. . .

Է՛հ ի՞նչ ընէ . . . այսպէս իր շահն անձնական կ'ստիպէ որ նախատինքն համբերէ. Դեռ հօգօր ես. կ'սպասէ որ ապագան Գուցէ տկար. քեզ իր ձեռքը կը մասնէ . . .

Երբ դու մօտն ես. նախատելու կը վախնայ, Որ հեռանաս. է՛հ այն ատեն կ'սկսի. Սիրտ, զգացում, խիղճ ու պատիւ չունի նա. Երբ չես լսեր, ինքն այն ատեն կը խօսի . . .

Եւ թէ օր մը կոյր բազմին խաղն անիրաւ Բարձրութենէդ վայրիկ մ'իշխալը որ թողու, Օ՛հ այն ատեն այդ ապիկար երկուտ հաւ Տկար եղունգն կեղնէ վրագ սրելու . . .

Իր վրէժը ահա այսպէս կը լուծէ. Մի՛շտ քու տկար, մի՛շտ քու ինկած վայրկեանին. Նա՛ մութին մէջ միայն դաւեր կը նիւթէ. Խլուրդին պէս որ կը վախնայ դէմ լոյսին:

Կուգայ օր մը. կը բարձրանա զու գարձեալ. Կից մը կուտաս այդ կեղծ մարդու կռակին. կը մօտենայ նա երբ տեսնէ քու նոր փայլ. Խոչոր թուք մը նետէ ազտոտ երեսին:

Աղեհանգրիպ ՄԱՌԻ

ՄԱՐՄԻՆԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ

Ամէն ոք դիտէ թէ ինչ է գերեզմանատուն մը. փակ աչօք երթալէ առաջ՝ բայց աչօք դացած գաղափար մը կա լիսած ենք անոր վերայ: Թաղման վայր մը՝ ուր ամեն մեռեալ պատանի հետ ունի մի քանի կանգուն տեղ հոն միեւնոյն վայրին մէջ. ահա ընդհանուր սահմանը գերեզմանատան մը Բայց այս է՛ ճիշտ սահմանը Մարմինայի Ազգային գերեզմանատան: Հոն բացառապէս կայ պատ մը, ապստամբ պատ մը՝ որ կրկողովից կը բարձրանայ և երկուքի կը բաժնէ գերեզմանատունը. վերի եւ վարի թաղերու, կամ աւելի որոշ բաժով, մին ՀԱՅ-ԼԱՅՅԻ համար և երկրորդ յատկացեալ անոնց՝ որոնց ժպտած է՛ բախտը և օրք կը յուսային միամտաբար թէ անհաւասար եղբեր պիտի հաւասարէին գէթ հոն. կը սխալէին:

Սրբապիղծ օրմը — Սրբապիղծ կ'ըսեմ պատին՝ չի մկրտելու համար այդ անկանով զայն բարձրացնել տուող ասունները — այդ օրմը նորանոր ցաւեր կ'արթնցունէ ամէն աշխարհի ներսի դիւն Մարդ կը փորձուի մասնելու յ՛՛, բախտին մէկ անողոք հեզնութեամբ զայն բարձրացնել տուողներէն այս կամ այն եթէ անակնկալ ցնցում մը կրէ իւր փարթամութեանը մէջ՝ այդ պարագային այդպիսի մէկու մը ս'ըր պիտի յատկացուի, վերի թէ վարի թաղը, քանի որ աս այժմ՝ մինչև ցնոր անօրինութիւն՝ միջին մաս չ'կայ հարուստ անցեալ մը այլ թշուառ մեռնող անձանց յատկացեալ:

Ամէն ոք որ գործ մը կ'ունենայ գերեզմանատան հետ՝ լռելեայն կ'իմացուի թէ անբաժան է թախիծը, վիշտը. զուարթ պարագայք չ'են հրաւիրեր մարդս հոն: Երեսակայեցէք պահ մը չուտ մայր մը՝ որ իւր բոլոր սէրը և յոյսը դրած կեդրոնացուցած էր իւր միամտը զաւկին վերայ, և ահա մահը անպարտին՝ կուգայ կը խլէ զայն և անոր հետ կը ցնդին ամէն յոյս. զոր օրինակ, այդ տեսակ մօր մը որդեկորոյս՝ երբ ամբողջելու համար իւր որդւոյն մարմինը՝ ցոյց կը տրուի լեռի, անջրդի և աւազուտ անկիւն մը պատէն անդին անժառանգներու յատկացեալ կրնաք երեսակայեցէք, ազնիւ ընթերցող, այդ տեսակ մօր մը կսկիծը. անպատճառ մայր լինելու հարկ չ'կայ գաղափար մը կազմելու համար վշտին մեծութեանը վերայ:

Մահը մեր բոլորին կամքէն անկախ բան մ'է, նախաինամութեան մէջ անօրինութիւնը՝ որոյ առաջ մեզ կը մնայ միայն խոնարհիլը. բայց նոյնը չ'է գերեզմանատան այս խնդիրը. փոխանակ մը թաղութարութիւնը ունենալու մահուան ստիճած վիշտը թեթեւցած տեսնելու մեր նմաններէն, հակառակը կը տեսնեմք:

Գերեզմանատանց մէջ կը գտնուի անկիւն մը անշատ՝ բայց ոչ թէ պատով զատուած, և այն ալ սահմանուած անձնապաններու, ոճբագործներու. կ'ըմբռնեմ ասիկայ. բայց ինչ որ չ'եմ կրնար ըմբռնել այն ալ միեւնոյն գերեզմանատան մէջ հարուստ և ազգաւոր դասակարգեր պատով զատելու այս խտրութիւնն է:

Դիտելի պարագայ մ'ար:

Գերեզմանատան այս բաժանումը երկու մասանց՝ գաղթականութեան գալէն վերջն է որ գոյութիւն ունի, այսինքն հազիւ 2 — 2 1(2 տարի կայ. ի՞նչ կը նշանակէ ասիկայ:

Արարքը ինքնին պախարակելի, այգանելի է. այդ տեսակ բաժանում մը գնիլը գաղթականութեան հաստատուէն վերջ՝ կրկնակի պախարակելի է: Գիտեմ թէ « պախարակելի » բառը շատ մեղմ է. բայց չեմ ուզեր կծու բառ մը գործածել զիւրազգած անձնախորութիւններ չի վերաւորելու համար:

Վարիչ մարմնոյն պատուարման անգամոց ու շաղթութիւնը կը հրաւիրեմ գերեզմանատան այս խնդրոյն վերայ: Ինձ այնպէս կ'երեսի թէ իրենք կ'անդրադառնան իրաց ճշգրիտ կացութեանը վերայ, ապա թէ ոչ պիտի ուզէին վերջ մը տալ այս անլուր և իւր տեսակին մէջ եզակի խտրութեանը:

ՅԱՐ. Լ. Ս. ՇԱՍԼԵԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԻՈՐ ԴԱՍԵՐ
ԶԱՓԱՅԱՍՆԵՐՈՒ ՆԱՍԱՐ

ԶԱՅ ԱԻԵՏԱՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՍԷՋ
Ի ՏԱՂԱՌՏԻՅԷ

Առաջիկայ նոյեմբեր ամսոյ 6-ին սկսուել
երեկոյնները ժամը 7 1/2 մինչև 9 1/2 պիտի
աւանդուին Անգղ. Գաղղ. Արաբերէն և Հա-
յերէն դասերը:

Դիմել առ Մ. Յ. ԳՆԱՃԵԱՆ Հիմնադիր-
Տնօրէն Հայ Աւետարանական վարժարանաց:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈ

Յուզի Պաք վաճառատան մօտերը, Կառե-Է-Պեմարի
ճիւղ գիւմար

ԵԿԱՒՕՅ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին յայտարարելու թէ, վերջերս
իրենց նոր բացած փուլին մէջ, անխաղախ ա-
լիւրէ կը պատրաստուի ԳԱՂՂԻՍԿԱՆ, ԱՆԳՂԻՍ-
ԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հացերու Սուր-
ճի, թէյի և կաթի պարսիականներ, և այլն:
Եկաւօք և Ընկերութիւն մեծ ջանք և
հոգածութիւն պիտի ունենան իրենց դիմող բոլոր
յաճախորդներն ըստ ամենայնի գոհացնելու:
Յանձնարարութիւնք ամենայն ճշգրտութեամբ
և փութով կը կատարուին 9-50

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐԶՊԱՆԵԱՆ
ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻՉ

Իւր գործատեղին հաստատած է Ապ-
տինի պալատին ճիշդ շինման փողոյքը, Շա-
րա-Է-Պօսթան թիւ 7 տան մէջ:

Ամենէն դժուարահաճներն անգամ գո-
հացնելու պայմանաւ կ'արդուի շապիկներ
և այն ամեն զգեստեղէններն, որոց համար
արդուի պէտքը կ'զգայուի:

Ասանցմէ զատ ունի նաև լուացարա-
լութեան յատուկ ճիւղ մը, ուր իրեն գի-
մող յաճախորդներուն ճերմակեղէններն
զատ զատ լուարու գովելի գրութիւնը հաս-
տատած է:

Յաճախորդներուն գիւրութիւն ընծա-
յելու նպատակաւ ճերմակեղէններն ինք
անձամբ պիտի առնէ տուներէն և պիտի
վերադարձունէ որոշեալ ժամանակին:

ԳԻՆԵՐԸ ԶԱՓԱԻՈՐ ԵՒ ԴԻՐԱՄԱՏՅԵԼԻ
4-8

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ
ՄԱՆԿԱԲԱՐՉ

Վկայեալ տեղական կառավարութիւն և
բժշկական վարժարանէն

Իւր բնակութիւնը հաստատած է ի Շարա
Ապախի-Աղղղ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին
դիմաց:

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկու-
թեամբ ստացած փորձառութիւնը և տեղական
կրթայի պահանջներուն մասին ունեցած գիտակ-
ցութիւնը կարելոր առաւելութիւններ են:

Իրեն դիմողները կատարելապէս գոհ պիտի
մնան:

12-24

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՒ ՄԱՍՆԱՅԻՆԵՐՈՒ

ՊՕՆՕԿՐԱՍ

ԳԱՆԻՐԷ. - Մուսի փողոյ. - ԳԱՆԻՐԷ:
Ս. և Ս. Սեմետլիի վաճառատան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ
կը գտնուի պատի և քօնսօլի ընտիր տե-
սակէ բանալիներու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷՔ ՀՈՆ և պիտի գտնէք ամէն ճա-
շակի յարմար զանազան տեսակ արանց և կա-
նանց ժամայոյցներ, աղամանդազարդ, ոսկի, ա-
ծաք և նիւթ:

Ֆրանսական և ամերիկեան ապրանք ամե-
նաքնտիր տեսակներէն զարդեղէններ, շղթաներ,
օդիւր, մասանիներ և այլն:

Ամէն տեսակ ժամայոյցներու նորոգութիւն
կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն
ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ
25-50

ՏՕՐՔՐՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄԼԱԲՈՅԺ
Ապրիլ, Շարե Քուպրի, թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հա-
սակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ
ակումներ:

Կը դադարեցնէ վալրիկեանապէս ակումայի ցա-
ւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր
պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տե-
սակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակումներուն տոկունու-
թիւնն առ նուազն երկու տարուան համար
կ'երաշխաւորէ:

3 4-10

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ
Տայրեի Սանիթի ճիւղ գիւմար

Ամենաբնորոգ ապրանքներէ կը պատրաստէ
խոտ կոկիկ, հաստատուն և ճաշակաւոր կոշիկ-
ներ, արանց, կանանց և տղայոց համար:

Գիները չափաւոր և աժան:
Փորձ մը միայն կը բաւէ:

17-24

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Ի ԳԱՆԻՐԷ
ՇԱՐԱ ՄՕՉԱՄԵՏ ԱԼԻ (ԶԱՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր
առաւօտեան ժամը 7 1/2 մինչև երեկոյեան ժամը 8 1/2, պիտի գտնուի իւր
Տպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի և
տեսակի յանձնարարութիւններ: Ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահազդեր, Հրախրագրեր, Այցևաբեր, Յանկեր,
Կիրթեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կաւոնագրեր, Տոմսեր, Բնկերութեանց և
վաճառականներու սպագրական ամեն պիտոյցներ:

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոս-
տանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մարտութեան,
ճշգրտագրութեան և գներու չափաւորութեան մէջ:

Եզրպատսի ո և է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները
ամենայն խնամք և փութով կը կատարուին:

Տպագրութիւն Ա. Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ
Le Gérant Dr A. S. HAGOPIAN

ԳՐԻՔՈՐ ՊԵՇԻՐԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ
Պազար Մուրուր Թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խանութը
Շարա Միգէլինէն փոխադրած է ի Պազար Մու-
րուր: Ֆրանսական նորաձեւութեանց յար և նը-
ման կոշիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած
հմտութեամբ մինչև ցարդ գոհ ըրած է իրեն գի-
մող Պատ. յաճախորդներն:

Իւր գործածած ապրանքներու տոկունու-
թիւնն երբէք տարակոյս չ'վերցնէր:

Իրեն եղած յանձնարարութիւնք ո'չ միայն
չափաւոր գներով, այլ և փութով և մեծ խնա-
մով կը պատրաստուին:

Դիմեցէք, եթէ կ'ուզէք ճաշակաւոր հագնիլ
և կոշտերէ (նասոր) ազատ մնալ:

20-24

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐՐԻԷ, ՎԷՔԱԼԵԹ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ
(բասարդ) սեւ, շագանակագոյն և ոսկեգոյն:

Սեւ ներկ շիշով վալրիկեանապէս սեւցնող:
Սոյն ներկերու տեսողութիւնը մէկ ու կէս
ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադարեցնէ եւ մա-
զերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տաղ)
գլուխները մազ կը բերէ: 17 տարուան ճա-
ղատ գլուխներու վրայ փորձուած և հիա-
նալի արդիւնք տեսնուած է: Շիշը 8 լրջ:
ողջ (2 ֆրանք):

ձերմկցնող շուր շիշով, որը մարմնոյն
բնական սպիտակութիւն կուտայ առանց
զգացնելու: Եզրպատսի մէջ միակը:

Ակոյսի փոշի և շուր. մին մարուր և
ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ
պահող և ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ ու-
րոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ
տակաւ թափիլ և օր մը ճաղատ ըլլալու
վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք և կը փոխա-
նակենք բոլոր տղայաց գործածած նամա-
կադրոշմները:

3 5-8